



Սայաթ Նովա

Աշխարհըս մե փանջարա է

Էսպես Արութինի ասած,
Աշխարհըս մե փանջարա է,-թաղերումեն բեզարիլ իմ.
Մըտիկ տըվողըն կու խուցվի,-դաղերումեն բեզարիլ իմ.
Էրեգ լավ էր կանց վուր էսօր,- վաղերումեն բեզարիլ իմ.
Մարթ համաշա մեկ չի՝ ըլի,- խաղերումեն բեզարիլ իմ:

Դովլաթն էթիբար չունե, յիփոր կերթա ուրուշ-քարով.
Լավ մարթն էն է՝ գլուխըն պահե աշխարումըս էթիբարով.
Աշխարըս մեգ մընալու չէ՝ իմաստնասիրաց խաբարով.-
Գուգիմ թըռչի բըլբուլի պես,- բաղերումեն բեզարիլ իմ:

Ո՞վ կոսե թե յիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մուտըն՝
Աստըճու ձիռումըն հիշտ է մարթու աշխարք ելումուտըն.
Դուրթս էնդուր ճանփա չէ գնում՝ շատացիլ է խալխի սուտըն.
Քըսանըն՝ մե դուլ չին պահում,- աղերումեն բեզարիլ իմ:

Աշխարըս միգ մընալու չէ, քանի նըստինք գող ու սափին.
Հում կաթնակիր-Աթա՛մի գաթ, նա՛լաթ ըլի էտ քու բափին.
Համփիրութինըս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին.
Դոստիրըս դուշման ին դառի- յաղերումեն բեզարիլ իմ:

Սայաթ-Նովեն ասաց՝ դարդըս կանց մե ճարըն շատացիլ է.
Չունիմ վաղվան քաղցըր փառքս, հիմի դառըն շատացիլ է.

Բըլբուլի պես Էնդուր գու լամ' վարթիս խարըն շատացիլ է.
Չի'ն թողնում վախտին բացվելու,-քաղերումեն բեզարիլ իմ: